

ком времени и пространстве, которые существуют на раннем этапе формирования и развития армянской мифологии.

## THE METHODOLOGICAL PRINCIPLES OF STUDYING ANCIENT LAYERS OF ARMENIAN MYTHOLOGY

P. A. BARSEGHYAN

From the point of contemporary religious studies, philosophy and comparative mythology the article examines the methodological principles of studying ancient layers of Armenian mythology. The author analyzes the general concepts and basic principles for the approaches and ideas on way of thinking, imagination, world view, world comprehension, mythological space and time special to the mythological systems of all nations which also existed in the ancient layers of Armenian mythology and played an important role in formation and development of Armenian mythological system.

## ՊԱՏՄԱԿԱՆ ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա. Գ. ԲԱՐԵԳԻԱՆ  
Փիլ. գիտ. թեկն., դոցենտ

Իբրև ուրույն գիտական ուղղություն՝ պատմական կրոնագիտությունն օրգանացես կապված է հասարակության և հոգևոր կյանքի պատմության, հոգևոր մշակույթի զարգացման օրինաչափությունների և դրանց տեսական յուրացման հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրության հետ: Այդ գործոններով թելադրված՝ տեսական գիտելիքների համակարգում պատմական կրոնագիտությունը կարևորվում է մի շարք այլ տեսանկյուններից ևս:

Քանի որ կրոնը, հավատքային առանձնահատկություններից զատ, խտացված կերպով արտահայտում է նաև հասարակության հոգևոր փորձը, տեսական մտքի համար այն հանդես է գալիս երկակի նշանակությամբ՝ իբրև հասարակության հոգևոր կյանքի և հոգևոր մշակույթի անքակտելի մաս և, միաժամանակ, իբրև հասարակության պատմության բաղադրատարը: Այդ տեսանկյունից ավելի քան ակնհայտ է, որ հասարակության պատմության համակարգային վերլուծությունը թերի և միակողմանի կլինի առանց հոգևոր կյանքի օրինաչափությունների և դրսնորումների ուսումնասիրության, իսկ վերջինս չի կարող ամբողջական տեսք ունենալ առանց կրոնների պատմության: Պատմական կրոնագիտության տեսական նշանակությունը կարևորվում է նաև կրոնների էության բացահայտման և բարեշրջման օրինաչափությունների ուսումնասիրության տեսանկյունից: Պատմական կրոնագիտության հիմնարար սկզբունքները թույլ են տալիս քննաբար յուրացնել և արժևորել նաև կրոնական համակարգերի պատմական ժառանգորդության ընդհանրական օրինաչափությունները: Այդ համատեքստում է կարևորվում և

այն, թե կրոնական համալիրի օրգանական տարրերն ինչ ազդեցություն են գործում անհատական, հասարակական հոգեբանության և ազգային հոգեկերտվածքի վրա, ինչպես են վերածվում պրակտիկ գործունեության ազդակների, գաղափարների, տեսությունների, աշխարհայացքի և այլն:

Պատմական կրոնագիտության հիմնահարցերի ուսումնասիրությունն օրգանապես կապված է նաև **հարակից գիտությունների** (փիլիսոփայություն, սոցիոլոգիա, պատմություն, մարդարանություն, ազգագրություն, հնագիտություն և այլն) **հետ:** Պահանջվող ուշադրություն պետք է դարձնել և այն իրողության վրա, որ օրգանապես կապված լինելով տեսական մտքի և հասարակական պրակտիկայի փոփոխությունների և զարգացման գործընթացների **հետ՝** պատմական կրոնագիտությունը ևս հանդես է գալիս իբրև փոփոխվող և զարգացող դիմամիկ համակարգ:

Պատմակրոնագիտական վերլուծություններն անխաղելիորեն կապված են այնպիսի հիմնահարցերի պարզաբանման հետ, ինչպիսիք են՝ «**կրոն**» հասկացության իմաստային վերլուծությունը, պատմական կրոնագիտության համակարգի, հիմնական դպրոցների կայացման փուլերի և պատմակրոնագիտության մեթոդների առանձնահատկությունների պարզաբանումը:

**Կրոն** (religio) տերմինը<sup>1</sup> շրջանառության մեջ է դրվել Յին Յօնոմում և դարում: Նախապես այն օգտագործվել է բավականին տարողունակ բովանդակությամբ և հավաքական կերպով նշանակել է **այն ամենը**, ինչը կապված է եղել դիցապաշտության **հետ** (այդ թվում՝ դիցաբանական աստվածների մասին պատկերացումները, պաշտամունքային գործունեության հետ կապված կարգավորման ու պրակտիկ հարաբերությունները և այլն): Այն միանգամայն այլ իմաստ է ձեռք բերել քրիստոնեության շրջանակներում, որը «**կրոն**» տերմինը կիրառել է միայն

<sup>1</sup> Յինք ընդունելով համեմատական լեզվաբանության տվյալները՝ արդի կրոնագիտությունը «**կրոն**» տերմինը ստուգաբանում է մի քանի նշանակությամբ: Առավել ընդունելի են համարվում հին հռոմեական երկու տարբերակները: Առաջինը (ցիցերոնյան տարբերակ) «**religio**»-ն մակաբրում է հռոմեական «relegere» (հետ գնալ, վերադառնալ, կրկին ընթերցել, հավաքել, հայել, մտորել) տերմինից և կրոնը բնութագրում է իբրև «աստվածավախություն», «աստվածների պաշտամունք», «այն ամենի խորազնին քննություն, ինչը կապ ունի աստվածների պաշտամունքի հետ»: Ըստ երկրորդ (Լակտանցիոսի) տարբերակի «**religio**»-ն ծագել է լատիներեն «**religare**» (վերցնել, կապել, շաղկապել, կաշկանդել) տերմինից և նշանակել է «Աստծու հետ միավորող հանգույց, Աստծուն ծառայելու և բարեպաշտությամբ խոնարհվելու կապահծություն»: «**կրոն**» տերմինը այս ստուգաբանությամբ ամրագրվել է քրիստոնեության մեջ, որը հետագայում լայն տարածում է գտնել Եվրոպայում և քրիստոնեական Արևելքում:

Ֆրանսիացի լեզվաբան է. Բենվենիստի կարծիքով «**religio**» տերմինը և իմաստային առումով, և ձևաբանորեն կապված է «**religare**» տերմինի հետ և բառացի նշանակում է բարեպաշտություն կամ երկյուղածություն: Նա համարում է նաև, որ տերմինը նախապես «սուրբեկտիվ հակավածություն է ունեցել» և օգտագործվել է կրոնական վախի հետ կապված «իմքնաբերական գործունեություն» նշանակությամբ: Այդ իսկ պատճառով էլ գիտականը քրիստոնեության կողմից «**reeligare**»-ի օգնությամբ մակաբրած «միմյանց կապել» իմաստը պատմական սխալ է համարում, քանի որ, ըստ նրա, այդ պարագայում «**religio**»-ն պարզապես դառնում է «Աստծու և հավատացյալի միջև առկա օրինական կապ»: Այդ ամենի մանրամասները տես «Религиоведение: Энциклопедический словарь». М., 2006, с. 872; Пивоворов Д. В. Философия религии. М., 2006, с. 16; История религии (учебник. Под общ. ред. И. Н. Яблокова). В 2-х томах. Т. 1, М., 2002, с. 17-19 և այլն:

սեփական հավատը բնութագրելու համար, իսկ մնացյալ բոլոր կրոնները որակել է «հեթանոսություն» տերմինով: **Այդ նշանակությամբ էլ «կրոն» տերմինը ներմուծվել է Եվրոպական լեզուներ:**

Քրիստոնեական աստվածաբանության շրջանակներում միշնադարում ձևավորվել է տերմինի «ընդարձակ» մեկնությունը, որը «միշնորդավորված» իմաստով «կրոն» էր համարում նաև հեթանոսությունը: Սակայն քրիստոնյա աստվածաբանները «religio» ասելով հասկանում էին միայն «իրական կամ հայտնութենական կրոնը»՝ քրիստոնեությունը, որը հակադրում էին մինչքրիստոնեական շրջանի «դիվական» (դեմոնիստական) կեղծ կրոններին»: Այդ մոտեցումն աստվածաբաններին բռույ էր տալիս հետամուտ լինել մեկ այլ նպատակի և՝ «հեթանոսական կրոնները» վերջնականապես օտարել իրենց նշակութային հիմքերից և «անհրաժեշտ օգտակարության» դիրքերից անտիկ նշակույթը կապել բացառապես քրիստոնեական աշխարհընկալման հետ<sup>2</sup>:

**Տեսական և պրակտիկ գործոններով պայմանավորված՝ «կրոնի» բովանդակային ուսումնասիրության միանգամայն նոր փուլ է սկզբնավորվել XVI-XVIII դարերում, կրոնագիտության «Էմպիրիկ» (փաստական) **հիմքերի ձևավորման շրջանում:** Այս փուլում բացարիկ դեր են կատարել արևելյան (հինդուիզմ, կոնֆուցիականություն, դասսականություն, սինտոիզմ, իսլամ և այլն) կրոնների, ինչպես նաև՝ Աֆրիկայի, Ամերիկայի, Օվկիանիայի առանձին կղզիների վաղ հավատալիքների<sup>3</sup> պատմատեսական վերլուծության և ընդհանրացման վրա հենված կրոնի փիլիսոփայական սահմանումները: Այդ համատեքստում մեծ**

<sup>2</sup> Ուսւ խորհրդային կրոնագետ Ն. Կապուստինը հեթանոսությունը քրիստոնեականացնելու այդպիսի օրինակ է համարում նախամիաստվածության մեկնություններից մեկը: Այդ առնչությամբ նա գրում է. «XVII դարում տարածվեց այն տեսակետը, որ Աստծու կողմից «իրական» կրոնը հայտնությամբ տրվել է Աղամին, բայց հետազոյւմ հեթանոսներն աղավաղել են այն: Առավել «մաքուր» ձևով այն պահպանվել է քաղղեացիների մոտ, նրանցից անցել պարսիկներին, իրեաներին ու եգիպտացիներին: Մովսեսն, այն ընդունելով վերջիններից, փոխանցել է Օրփեոսին, որն էլ տարածել է հույնների մեջ: Օրփեոսի մեկնությամբ «իրական» հավատը Պլատոնի և նորապատոնականների միջոցով հասել է քրիստոնյաներին»: Տե՛ս **Կապուտին Հ. Ս.** Օсобенности эволюции религии. М., 1984, с. 67.

<sup>3</sup> Պատմական կրոնագիտության համակարգի կայացման համար անհրաժեշտ պատմական և էմպիրիկ նյութի կուտակման բնագավառում բացարիկ կարևոր դեր են կատարել կարոլիկության և բողոքականության քարոզիչները, պատմության, ազգագրության, համեմատական լեզվաբանության և մասնավոր այլ գիտությունների ներկայացուցիչները, քաղաքական գործիչներն ու ճանապարհորդները: Այդ գործի առաջամարտիկներ են համարվում հիսուսյան քարոզիչներ Մ. Ռիկին, Ժ. Լաֆիտոն և գիտնական ու քաղաքական գործիչները:

Չինաստանում քարոզելու ընթացքում Մ. Ռիկին, ծանոթանալով տեղական կրոններին, հանգեց այն հետևողայն, որ քրիստոնյաների նման կոնֆուցիականները ևս դավանում են երկնային Աստծուն: Այդ տեղեկություններն աննախադեպ հետաքրքրություն առաջացրեցին, որի ազդեցությամբ Եվրոպայում հիմք դրվեց ու կարծ ժամանակ անց բուռն զարգացում ապրուեցին:

Դյուսիսային Ամերիկայի տեղաբնիկների հավատալիքների ու սովորույթների մասին խիստ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Ժ. Լաֆիտոն, որը «Վայրենի աներիկացիների բարքերը ...» աշխատության մեջ ընդհանրացնում է նաև իրոկեզների և ալգոնիկների մասին հիսուսյան այլ քարոզիչների ջանքերով հավաքված 71 հատորանոց «Jezuit Relations» ժողովածուի նյութերը:

կարևորություն է ծեռք բերում պատմական կրոնագիտության տեսական հիմքերի ծևավորումը, ինչն օրգանապես կապված էր XVII-XVIII դարերում կրոնների փիլիսոփայական-տեսական ուսումնասիրության փորձերի հետ: Խոսքը վերաբերում է կրոնների էվոլյուցիայի և պատմական հաջորդականության օրինաչափությունների ուսումնասիրության Զ. Վիկոյի, Ֆ. Բեկոնի և հատկապես Դ. Շյումի փորձին, որոնք ոչ միայն բացահայտեցին կրոնագիտական բազմաթիվ օրինաչափություններ, այլև՝ շրջանառության մեջ դրեցին կրոնների ուսումնասիրության պատմական և հոգեբանական մոտեցումները: Կրոնական համակարգերի ուսումնասիրության գործում պատմականության և էվոլյուցիոնիզմի սկզբունքներն էլ ավելի ամբողջական տեսք ստացան Ժ. Կոնդորսիեյի, Յ. Շերդերի, Ա. Սեն Սիմոնի և Գ. Լեսինգի աշխատությունների շնորհիվ: Այդ ամենի հիման վրա XVIII դարում շրջանառության մեջ դրվեց «բնական կրոնի»<sup>4</sup> հայեցակարգը, որը մեկնաբանվում էր որպես միմյանցից «դրսնորման ծևերով» տարբերվող բոլոր կրոնների հավաքական ամբողջություն: Հայեցակարգի կողմնակիցները պնդում էին, թե բոլոր կրոնների հիմքում ընկած է «միևնույն գերագույն էակի ընդունումը», որի հավատը տրված է «պարզագույն», «առաջնային», «անմիջական» և ընդհանուր կամ «բնածին» այլ հասկացությունների միջոցով: Միաժամանակ գերագույն էակի պաշտամունքը դիտարկվում էր որպես «ապաշխատության հիմնական և գլխավոր գործոն», որի հետ սերտորեն կապված հանդես էին գալիս նաև անմահության և արդար հատուցման գաղափարները:

Թեև «բնական կրոնի» հայեցակարգը վերլուծաբանների համար հետազոտական լայն հնարավորություններ էր ընծեռում, սակայն այն աչքի էր ընկնում նաև բնորոշ սահմանափակություններով: Հայեցակարգի շրջանակներում կրոնները դասակարգվում էին ոչ թե դավանաբանական, պաշտամունքային կամ հոգևոր այլ բաղադրատարրերի, այլ՝ հասարակությունների, մշակույթների, կենցաղի և կոնկրետ այլ գործոնների «առանձնահատկությունների» հիման վրա: Իսկ դրանից հետևում է, որ «բնական կրոնի» հայեցակարգում կրոնի էության հարցերը քննարկում էին ընդհանուր դատողությունների շրջանակներում, իսկ կրոնագիտական վերլուծությունների հիմքում, որպես կանոն, ընկած էին հետազոտողի սուբյեկտիվ ընկալումները և սահմանափակ «անձնական փորձը»: Եվ

Նույնը պետք է ասել նաև Արևմտյան Աֆրիկայի տեղաբնիկների մասին Շ. դը Բրոսսի «Տրակտատ Աստված-ֆետիշների մասին» աշխատության մասին: Դենվելով եգիպտական և հունական դիցարանություններում ֆետիշզմի ծևափոխումների ուսումնասիրությունների վրա՝ հեղինակն աշխատության մեջ հիմնավորում է ֆետիշզմի, իբրև «կրոնի նախնական սկզբունքի» տեսությունը, որը հետագայում զարգացվեց Խ. Մեյներսի, Օ. Կոնտի և այլ հետազոտողների կողմից:

<sup>4</sup> «ճշմարտության մասին տրակտատ» աշխատության մեջ (1624 թ.) «բնական կրոն» հասկացությունն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել XVIII դարի անգլիացի փիլիսոփա և քաղաքական գործիչ Յ. Չերտերին: «Բնական կրոնը» համարելով «իրական» կամ «բանական» կրոն, որի հիմքում ընկած է բարձրագույն գոյի Աստծու մասին ուսմունքը՝ Չերտերին այն հակադրեց հայտնութենական կրոններին: «Բնական կրոնի» հայեցակարգի պաշտպանությանը հանդես են եկել նաև Ֆ. Վոլտերը, Ժ. Ռուսոն, Զ. Լոկը, Ս. Թինդալը, Զ. Թոլանդը, Դ. Շյումը, Գ. Է. Լեսինգը, Գ. Լեյմարը և շատ ուրիշներ: «Բնական կրոն» հասկացությունը միանգամայն այլ մեկնություն է ստացել Լ. Ֆոյերբախի աշխատություններում: Նա «բնական կրոն» է համարում բնության ուժերն անձնավորող վաղնջական հավատալիքները:

միանգանայն բնական պետք է հաճարել, որ հայեցակարգի կողմնակիցները տրոհվեցին բազմաթիվ ուղղությունների ու հոսանքների, որոնցից մեկն էլ XVIII դարավերջին ծևավորված «**բանականության անսահման իրավունքների» տեսությունն էր<sup>5</sup>:**

«Կրոն» հասկացության գիտական վերլուծությունն իր տրամաբանական ավարտին հասավ XIX դարում, երբ կառուցվածքային ավարտուն տեսք ստացավ կրոնագիտության համակարգը: Նորաստեղծ համակարգը բազմաթիվ թելերով կապված էր կրոնի փիլիսոփայական, սոցիոլոգիական, պատմական, ազգագրական և մասնավոր գիտական ոլորտների հետ: Յամադրական այդ դիրքերից ցույց տրվեց, որ կրոնը ևս կարելի է ուսումնասիրել ինչպես էմայրիկ, այնպես էլ՝ տեսական մակարդակներով: Այդ մոտեցմամբ քայլ կատարվեց հաղթահարելու կրոնի, իբրև բանականության համար սկզբունքորեն անհասանելի (իռացիոնալ) երևոյթի, ինչպես նաև մարդկային գործունեության (պրակտիկայի) համար «անդրանցական» ու «անբացատրելի» ոլորտի մասին ավանդական պատկերացումները: Ու թեև կրոնագիտության համակարգում դեռևս գերիշտող էին փիլիսոփայական և մասնավոր այլ գիտությունների մեթոդաբանական ու արժեքային մոտեցումները, ակնհայտ էր և այն, որ հրապարակ է իջել գիտական նոր դիսցիպլին: Իսկ վերջինիս «նորամուտը» նշանավորվեց նրանով, որ, հանդես գալով որպես հարաբերականորեն ինքնուրույն ոլորտ, կրոնագիտությունը կրոնների եռթյան և պատմական առաջընթացի հետ կապված հիմնահարցերը լուծում էր սեփական սկզբունքներով: Այլ կերպ ասած՝ կրոնագիտությունն աչքի էր ընկնում ուսումնասիրության սեփական համակարգով, որը լիովին տարանջատվել էր ինչպես փիլիսոփայությունից, այնպես էլ՝ մասնավոր գիտություններից: Եվ վերջապես, կոնկրետ հետազոտությունների ուղղվածությունից և հետազոտողների հայցըններից անկախ՝ կրոնագիտությունը հանդես եկավ ուսումնասիրության ուրույն առարկայով:

Միաժամանակ ակնհայտ դարձավ և այն, որ «կրոն» երևոյթի սահմանումը

<sup>5</sup> Այդ տեսության հիմնադրույթները պրակտիկ կիրառում ստացան XVIII դարի վերջերին, երբ յակորինյան դիկտատուրայի շրջանում, Ուրեսպիերի ջանքերով, 1794 թ. մայիսի 7-ին Ֆրանսիայի Կոնվենտը դեկրետ հօշակեց «Բարձրագույն եռթյան պաշտամունքի» մասին: Այն հակադրվեց կարողիկությանը և Ֆրանսիայում գործող մյուս կրոններին փոխարինած «բանականության պաշտամունքին» (որով Ֆրանսիայում եկեղեցիները վերանվանվել էին «բանականության տաճարներ») և եկեղեցիներից դուրս էին բերվել բոլոր սրբաքանդակները, որոնք փոխարինվել էին «հեղափոխության հերոսների» կիսանդրիներով): Քրիստոնեական կրոնի և եկեղեցու դեմ ուղղված համալիր միջոցառումների՝ ապաքրիստոնեականացման շրջանակներում հրապարակ իջած այդ միջոցառման հիմքում ընկած էր նաև «քաղաքացիական կրոնի» մասին ժ. Ժ. Ուսույն տեսակները, որը Կոնվենտի կողմից համարվեց «հասարակության բարոյականության միակ հիմք»: Դոչքակելով, որ «Փրանսիական ժողովուրդը ընդունում է բարձրագույն եռթյան և հոգու անմահության» պաշտամունքը՝ դեկրետը սահմանափակեց կարողիկության և մյուս կրոնների իրավունքները, պաշտամունքի սպասավորներին արգելեց պաշտամունքային օրենքությունը դուրս դրևել ծառայություն կատարել, «միջոցառումներ» նշակեց «կրոնական ֆանատիզմի և նախապաշտունքների դեմ»: Շրջանառության մեջ դրվեց նոր՝ Յանրապետության օրացույցը, անկրոն տոնների (Յանրապետության, ողջ աշխարհի ազատագրության, հայրենասիրության, ծշմարտասիրության, արդարության, ինչպես նաև՝ բանականության) ցանկը: Արիեստական համակարգ լինելով՝ յակորինյանների անկումից հետո «Բարձրագույն եռթյան» պաշտամունքը կրախի մատնվեց:

միանգանայն բարդ ու տարողունակ գործընթաց է: Ավելին, որպես կանոն, այդ սահմանումները «... ազատ չեն գաղափարախոսական կապանքներից և ենթադրում են այս կամ այն հեղինակի միանգանայն որոշակի աշխարհայացքային դիրքորոշման առկայություն»<sup>6</sup>: Դա է պատճառը, որ կոնկրետ հետազոտական պարամետրերով պայմանավորված՝ պատմական կրոնագիտության համակարգի ձևավորման գործընթացն անցել է հաջորդական մի շարք փուլերով: Յիմք ընդունելով քննարկվող հիմնահարցերի շրջանակը, ինչպես նաև դրամց բովանդակային ուղղվածությունը՝ այդ գործընթացում կարելի է առանձնացնել **Եվրոպական և ամերիկյան դպրոցների գործունեությունը**:

Եվրոպական տեսական մտքի ներկայացուցիչները համեմատական կրոնագիտության հիմնահարցերի նկատմամբ ցուցաբերել են հետազոտական և արժեքային տարբեր մոտեցումներ, աչքի են ընկել տեսական ընդհանուրացումների ընդգծված բազմազանությամբ, ինչն էլ թույլ է տալիս առանձնացնել կրոնագիտական մի քանի դպրոցներ:

Այդ գործընթացում ազդեցիկ դեր են կատարել հատկապես **XVIII դարավերջի և XIX դարի առաջին կեսի գերմանական փիլիսոփաներն ու լիբերալ աստվածաբանները**: Յ. Յերդերը<sup>7</sup>, Ֆ. Շլեգելը և, հատկապես, Գ. Յեգելը և Ֆ. Շլեյերմախերը, նախորդ դարաշրջանների կրոնագիտական փաստական նյութի ընդհանրացման հասարակության պատմական առաջընթացի մեթոդաբանական հիմնահարցերի լուծման շրջանակներում, գիտական շրջանառության մեջ դրեցին **կրոնների ուսումնասիրության պատմական մեթոդը**, որը լայն տարածում գտավ Եվրոպական այլ երկրներում:

Այս փուլում առավել ազդեցիկ դեր է կատարել **Գ. Յեգելը**: Դեռևս վաղ շրջանի աշխատություններում, քննաբար անդրադառնալով քրիստոնեության պատմությանը, Յեգելը պնդում է, որ պատմականությամբ օժտված է քրիստոնեության ողջ համակարգը, այդ թվում՝ դոգմատիկան: Անդրադառնալով կրոնների պատմական զարգացման վերլուծությանը՝ նա փաստարկված կերպով մերժում է կրոնը խաբեություն որակելու ֆրանսիական լուսավորիչների տեսակետը և ցույց է տալիս, որ ցանկացած կրոն ունի պատմական ու ժամանակային բնութագրություն, իսկ դրանց հավատքային համակարգերը հանդես են գալիս իրենց դարաշրջաններին յուրահատուկ պատկերացումների արտացոլման որակով: Նա պնդում է նաև, որ պատմականությամբ են օժտված նաև կրոնների էվոլյուցիայի և զարգացման օրինաչափությունները, կրոնի և գիտակցության այլ ձևերի, կրոնի ու պետության փոխհարաբերությունները: Ելակետային համարելով այն հիմնադրությը, որ «կրոնի ոլորտը մեր գիտակցությունն է», նա միաժամանակ պնդում է նաև, որ կրոնի շրջանակներում են «լուծվում աշխարհակառույցի բո-

<sup>6</sup> **Торчинов Е. А.** Религии мира: Опыт запредельного. Психотехника и трансперсональное состояние. СПб., 2007, с. 14.

<sup>7</sup> Յ. Յերդերը համարվում է կրոնների պատմության համակարգում պատմականության սկզբունքի հիմնադիրը: «Գաղափարներ մարդկության պատմության փիլիսոփայության մասին» եռամսա աշխատության մեջ նա կրոնը դիտարկում է որպես հասարակական միավորման գործոն, իր դրական և բացասական կողմերով կրոնական փորձը որակում է որպես կրոնական գաղափարների բնական արտահայտություն և արմատապես մերժում է «խարեւության» տեսությունը: Պատմականության սկզբունքի ներդրմանը Յ. Յերդերը կրոնների վերընթաց փոփոխությունները դիտարկում է որպես միասնական գործընթաց:

լոր հանելուկները, վերացվում են խորիմաստ մտքի բոլոր հակասությունները, հանդարտվում զգացնունքային բոլոր տագնապները»: Ահա թե ինչու նա ընդհանրացնելով պնդում է և այն, որ կրոնը «հավիտենական ճշմարտության, հավիտենական հանդարտության և հավիտենական աշխարհի ոլորտն է», որը բոլոր ժամանակներում և բոլոր ժողովուրդների համար հանդես է եկել «արժանապատվության և կենսախնդության» որակով<sup>8</sup>:

Վյդ ամենի հիման վրա Գ. Շեգելն առաջադրում է կրոնների պատմական հաջորդականության եռաստիճան մոդել, որի համաձայն կրոններն անցնում են զարգացման հետևյալ փուլերը՝ «բռնական» (վաղնջական կամ «անհիճական») կրոն», «սուբստանցիոնալ կրոն» (հնչախիք են չինական, հնդկական կրոններն ու բուդյայականությունը. հեղինակի համոզմաք այս կրոններն աչքի են ընկնում «հոգևոր անհատականությամբ», այդ իսկ պատճառով էլ բովանդակային առումով նրանց են մերձենում նաև հուդյայականությունը, հունական ու հռոմեական կրոնները) և «բացարձակ կրոն» (քրիստոնեություն): Շեգելը պատմական օրինաչափությունների դիրքերից է բացարդում նաև կրոնների էվոլյուցիոն փուլերի մեխանիզմները: Կրոնների պատմական վերլուծության հեգեյան մեթոդ հսկայական դեր է կատարել ոչ միայն կրոնագիտության ձևավորման, այլև՝ լիբերալ աստվածաբանության ծավալման գործում:

Դարաշրջանի գերմանական փիլիսոփայության շրջանակներում կրոնների պատմատեսական ուսումնասիրության հիմքերի հետագա զարգացումը կապված է մարդարանական փիլիսոփայության ակնառու ներկայացուցիչ Լ. Ֆոյերբախի<sup>9</sup>, պոգիտիվիստական կրոնագիտության ավանդույթները զարգացնող Կ. Մարքսի<sup>10</sup>

<sup>8</sup> Վյդ մոտեցման մանրամասները տես Գեղել Գ. Վ. Փ. Փիլոսոփիա րելիգիա. Տ. 1, Մ., 1976, ս. 205.

<sup>9</sup> Կրոնների էվոլյուցիայի օրինաչափությունների բացահայտման գործում մեծ դեր է կատարել մատերիալիստական կրոնագիտության ազդեցիկ ներկայացուցիչ Լյուդվիգ Անդրեաս Ֆոյերբախը (1804-1872): Անաշնային համարելով մարդու եռարյան փիլիսոփայական իմաստավորումը՝ նա կրոնը և աստվածաբանությունը դիտարկում է իրեն մարդկային հատկությունների օտարում և պնդում է, որ կրոնն (Աստծու դավանանքը) այլ բան չէ, քան «երկատված մարդու ես-ի և Դու-ի կորսված միասնության փոխհատուցում»: Համարելով, որ կրոնը հանդես է գալիս իրեն այդ «կախվածության խեղաթյուրված արտացոլում»՝ Ֆոյերբախը եզրակացնում է նաև, որ «Աստծու դավանանքը» գործնականում հանդես է գալիս իրեն «մարդու սեփական եռարյան դավանություն»: Ի տարրերություն Շեգելի և հեգելականության՝ նա հասարակական կյանքի հոգևոր ոլորտի, այդ թվում և կրոնի բոլոր փոփոխությունները մակարերում է պատմական ուժերից՝ քաղաքականությունից, օրենքներից, բարոյականությունից և այլն:

<sup>10</sup> Կարլ Մարքսը (1818-1883) և Ֆրիդրիխ Էնգելսը (1820-1895) համարվում են դիալեկտիկամատերիալիստական կրոնագիտության հիմնադիրները: Նրանք կրոնի վերլուծությանը նվիրված առանձին հետազոտություն կամ մենագրություն չունեն: Մշակելով մեթոդ և աշխարհայցքային համակարգ՝ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսն անդրադեմ են բնության, հասարակության, մտածողության և նշակույթի տարրեր երևույթների, այդ թվում՝ կրոնի արժեքային վերլուծությանը: Նրանց հեղինակային աշխատություններում կարելի է հանդիպել կրոնի էռլույն, դրսկորման ձևերի, հասարակական դերի, կրոնական աշխարհայացքի տարրերի և կրոնի հետ կապված բազմաթիվ այլ հիմնախնդիրների արժեքային վերլուծությունների: Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը կրոնի հետ կապված հարցերը քննարկել են հասարակության պատմության համատեքստում: Կրոնի ծագումը բացատրելով «բնության և հասարակության ուժերից մարդկանց կախվածությամբ»՝ նրանք կրոնի էռլույնը բնութագրում են որպես «մարդկանց վրա իշխող

և կրոնի սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչ Մ. Վերերի<sup>11</sup> անունների հետ:

Կրոնագիտության հիմնարար սկզբունքների մշակման գործում XIX դարի գերմանական փիլիսոփաները մեծ տեղ են հատկացրել օտարման և կրոնի փոխադրձ առնչությունների հիմնահարցերի պարզաբանմանը (Լ. Ֆոյերբախ), կրոնի հասարակական էության և տնտեսական-արտադրական պայմանավորվածության (Կ. Մարքս), ինչպես նաև՝ հասարակական կյանքում կրոնի գործառնական առանձնահատկությունների (Մ. Վերեր) վերլուծությանը:

Կրոնագիտության համակարգի ծևավորման գործում գերմանական դպրոցի հաջորդ ներդրումը կապված է բողոքական աստվածաբանների անվան հետ: Այդ տեսանկյունից հատկանշական են հատկապես լիբերալ աստվածաբան Ֆ. Շլեյերմախերի, ինչպես նաև վաղ քրիստոնեության և նորկտակարանային տեքստերի պատմական ուսումնասիրության ոլորտում աչքի ընկած Ֆ. Բաուրի, Դ. Շտրաուսի<sup>12</sup>, տյուրինգենյան իին և նոր դպրոցների, Ա. Ռիչլի և ռիչլիանական դպրոցի Փանտաստիկ արտացոլում», իսկ գործառնական դերը և նշանակությունը՝ «ժողովրդի հաշից»: Այդ դիրքերից է նրանք առաջադրել են այն վարկածը, թե հասարակության զարգացման և «կախվածության ուժերի» վերացմանը գուգընթաց՝ իրականության կրոնական արտացոլումը (կրոնը) պետք է անհետանա:

<sup>11</sup> Կրոնագիտության համակարգի ծևավորման գործում անուրանալի ներդրում է ունեցել կրոնի սոցիոլոգիայի և բողոքականության պատմական դերի մասին Մարք Վերերի (1864-1920) ուսմունքը: Հակառապելով պատմության մատերիալիստական ըմբռնմանը և մերժելով հասարակական զարգացման օբյեկտիվ բնույթը՝ Վերերը պնդում էր, որ հասարակական կյանքի էությունը որոշվում է սույնեկտիվ (հետազոտողի մտային) գործնմերով, այսինքն՝ «արժեքային իդեալական տիպերով»: Նրա համոզմամբ՝ արժեքային այդ «իդեալական տիպերը» խտացված կերպով արտացոլված են բացառապես բողոքականության մեջ: Վերերի սոցիոլոգիական կոնցեպցիայում կրոնը բնութագրվում է իրեն ամենակատարյալ «արժեքային իդեալական տիպ», իրեն այնպիսի «հնքնավար գործոն», որը վերածվում է հասարակական զարգացման գլխավոր գործոնի:

<sup>12</sup> Ֆրիդրիխ Էռնստ Դանիել Շլայերմախերը (1768-1834) բողոքական լիբերալ աստվածաբանության (որը ծգտում էր գիտության զարգացման տվյալների, տեսական մտածողության և պատմականության սկզբունքի դիրքերից վերանայել քրիստոնեության ավանդական դոգմատիկան և այդ դիրքերից ծառայել «քրիստոնեության դավանաբանության պաշտպանության գործին») նախահայերից է: Կանտի, Ֆիլստեի, Շելլինգի և այլոց փիլիսոփայական հայացքների ազդեցությամբ նա կրոնն ըմբռնում էր որպես «անվերջության զգացում ու ճաշակ», Աստծուն որակում իրեն «անվերջ կեցության» և տիեզերական միասնության հիմք, իսկ կրոնի ակունք էր համարում անհատի ներքին (սույնեկտիվ) տրամադրությունը: Սպինոզայի հետևությանը Ֆ. Շլայերմախերը քննական մեթոդաբանության դիրքերից անդրադարձավ Նոր Կտակարանի վերլուծությանը՝ հիմք դնելով աստվածաշնչագիտության նոր ուղղության (հետազում քննադատական այդ մեթոդաբանությունը զարգացրեցին նորտյուրինգենյան աստվածաբանական դպրոցի ներկայացուցիչ Դ. Շտրաուսը և ուրիշներ):

Շեքեյան մեթոդաբանության ջերմ պաշտպաններից է նաև նորտյուրինգենյան աստվածաբանական դպրոցի հիմնադիր և դեկանավոր Ֆերդինանդ Քրիստիան Բաուրը (1792-1860): Լինելով ականավոր եկեղեցագետներից մեկը (հեղինակ է 5 հատորանոց «Եկեղեցական պատմություն» աշխատության՝ նա առաջիններից էր, որ ամրապնդավ քրիստոնեական սկզբնադրյուրների և կանոնական գրականության ուսումնասիրությանը: Եկեղեցական պատմությունը նա դիտարկում է իրեն հակադրությունների (հրեականության և քրիստոնեության, հուդա (պետրոսականների) և հեթանոս (պողոսականների) քրիստոնեության, Եկեղեցու և գնոստիկության և այլն) պայքարը: Այդ սկզբունքի դիրքերից է նա պատմականություն և վերագրում ոչ միայն քրիստոնեությանը, այլև՝ Եկեղեցական դոգմատիկային և Աստվածաշնչին:

րոցի, Օ. Պֆլեյդերի, Ա. Յառնակի, Է. Տրյոլչի և ականավոր այլ աստվածաբանների առաջադրած լուծումները, որոնք առանձին հարցերուն մեծապես օժանդակեցին կրոնագիտության սկզբունքների ձևավորման գործին:

Կրոնագիտության ձևավորման գործընթացում պատմական մեծ ծառայություն ունեն նաև **հոլանդացի** տեսաբանները: Բարենորոգչական եկեղեցու սպասավորներ Կ. Շիլեն և Պ. Շանտեափի դը լա Սոսեն առաջիններից էին, որոնք ընդհանրացմելով և համակարգելով կրոնագիտական ինքնուրույն դիսցիպլինների ձևավորմանը: Նրանց ջանքերով XIX դարի 70-ական թվականների վերջերին կրոնի պատմության և կրոնի փիլիսոփայության ամբիոններ հիմնադրվեցին Լեյդենի և Ամստերդամի համալսարաններում: Եվ պետք է նշել, որ համալսարանական նշանակություն ունեցող հատակորեն սահմանազատեցին կրոնագիտության և աստվածաբանության հետազոտական տիրույթները՝ ցույց տալով, որ դրանք պատկանում են միանգամայն տարրեր ոլորտների:

Կրոնագիտական լուծումների բազմազանությամբ աչքի է ընկել նաև **ֆրանսիական դպրոցը**: Շուրջ մեկ դար (XVII դարի երկրորդ կես - XVIII դարի երկրորդ կես) ֆրանսիական լուսավորիչների ջանքերով երկրում արմատավորվել էին հակակղերական միտումները: Ել ավելի արմատական էր XIX դարում ձևավորված **պողիտիվիզմը**, որի ներկայացուցիչներն, ավանդական կրոնը համարելով «անցած փուլ», անվերապահ կերպով մերժեցին աստվածաբանությունն ու մետաֆիզիկան: Այսպես, Օ. Կոնտը<sup>13</sup> կրոնների պատմական և սոցիոլոգիական քննադատության հիման վրա հանգեց այն հետևողական ներդաշնակություն հաստատելու համար պետք է ստեղծել նոր՝ մարդկության խորհրդապաշտական ըմբռնմանը նույնացվող «բարձրագույն էության» պաշտամունք, որի հիմնական նպատակ հռչակեց «ժողովրդին հեղափոխական ոգով դաստիարակելը»: Կրոնների և կրոնագիտական հարցերի նկատ-

Աստվածաշնչագիտության Ֆ. Շլայերնախների գործի շարունակող Դավիթ Ֆրիդրիխի Շտրաուսը (1808-1874), չներժելով հանդերձ Յիխուս Քրիստոսի պատմականությունն, անհիմն և փաստազուրկ համարեց նրա մասին ավետարանական պատումները: Քննադատական այդ դիրքերից է նա առաջադրեց այն տեսակետը, թե վազ և ուշ շրջանների եկեղեցական պատմության միջև առկա են տարածայնություններ:

<sup>13</sup> Հիմք ընդունելով հասարակության եռափուլ գարգացման Յ. Սեն-Սիմոնի ուսմունքը՝ պողիտիվիզմի հիմնադիր Օգյուստ Կոնտը (1798-1857) ձևակերպեց մտածողության «մեծ օրենքը», համաձայն որի ճանաչողությունն անցնում է զարգացման հաջորդական երեք փուլ՝ աստվածաբանական (ուր գերիշխում է մտածողության փիլիսոփայական մեթոդը), մետաֆիզիկական (ուր գերիշխում է մտածողության փիլիսոփայական մեթոդը) և պողիտիվ (ուր գերիշխում են դրական գիտությունների մեթոդները): Նա համոզված է, որ աստվածաբանական փուլում մարդկային միտքը երևույթները փորձում է բացատրել գերբնական ուժերի և Աստծու ներգործությամբ: Այդ գործընթացում ևս տեսաբանն առանձնացնում է պատմական երեք՝ ֆետիշիզմի (որը հեղինակը համարում է մտածողության պատմական առաջին ձևը և պնդում, որ այն տիպիկ է եղել նաև կենդանիներին), բազմաստվածություն (որը ձևավորվում է ֆետիշիզմի հիման վրա և նրանց տարբերվում է նրանով, որ աստվածներն ունեն ոչ թե առարկայական, այլ՝ վերացական բնույթ) և միաստվածություն (բնութագրվում է նրանով, որ բոլոր աստվածները ենթարկվում են մեկ՝ ճակատագրի աստծուն) փուլեր: Յասարակության միավորումն ապահովելու և հասարակական մերժաշնակություն հաստատելու միտումով՝ Օ. Կոնտն առաջարկում է «անձնական աստծուն և միաստվածային կրոնը» փոխարինել «բարձրագույն վերացական էակի» պաշտամունքով:

մանք, աստվածաբանությունից անկախ, պատմագիտական և էվոլյուցիոնիստական սկզբունքներ կիրառեցին նաև **Ն. Ֆյուստել դը Կուլանժը, Է. Ոնանը, Է. Դյուրկիեյմը**<sup>14</sup> և ուրիշներ: Այդ համատեքստում համեմատաբար չափավոր էր ֆրանսիական լիբերալ աստվածաբանների (Օ. Սարատյե և ուրիշներ) մոտեցունը, սակայն կրոնագիտության վրա վերջիններիս ազդեցությունը բավականին անճշան էր:

Կրոնագիտական մտքի զարգացումը բավականին հակասական ընթացք է ունեցել **կաթոլիկ** (հտալիա, Պորտուգալիա, Իսպանիա, մասամբ՝ Բելգիա) **երկրներում**: Եվ քանի որ դրանցում կրոնագիտության նկատմամբ մոտեցունները պայմանավորված էին ոչ միայն օրինակությունում, բնական և հասարակական գիտությունների զարգացմամբ և այլն) գործոններով, այլև աստվածաբանական (կաթոլիկյան, մասամբ՝ բողոքական) որոնումներով, տարբեր երկրներում այդ գործնթացը տարբեր երանգավորում ստացավ:

**Իտալիայում, Իսպանիայում և Պորտուգալիայում** առաջնային համարվեց ներումիզմի արմատավորումը, իսկ **կրոնագիտության նկատմամբ մերժողական մոտեցում որդեգրվեց**: Որոշակի տեղաշարժեր նկատվեցին միայն XX դարի կեսին, երբ Իտալիայում ասպարեզ իջան մեծ հեղինակություն վայելող բազմաթիվ ազդեցիկ կրոնագիտություններ և կրոնագիտական հիմնարար աշխատություններ: **Իսկ Վատիկանի 2-րդ ժողովից հետո կաթոլիկությունն ամբողջ հայացքով շրջվեց դեպի կրոնագիտություն**:

Նույնը պետք է ասել նաև **Անգլիայի և Շոտլանդիայի** մասին: Ինչպես անգլիկան, այնպես էլ շոտլանդական պրեսբիտերական եկեղեցիները ոչ միայն մերժեցին ճանաչել կրոնագիտությունը, այլև հասան նրան, որ պետական կրթական հաստատություններում արգելվեց վերջինիս դասավանդումը: Եվ չնայած դրան, այստեղ կրոնագիտությունը բուռն զարգացում ապեց համալսարանական հումանիտար կրթաճյուղերի կամ անկախ գիտնականների կողմից, ինչպիսիք էին Յ. Սահմաները, Թ. Կարլեյլը, Մ. Մյուլլերը, Է. Թեյլորը, Զ. Ֆրեզերը, Ֆ. Զևանսը և ուրիշներ:

Կրոնագիտության եվրոպական կենտրոններին զուգընթաց՝ XIX դարի վերջին տասնամյակներին ակտիվ գործունեություն սկսեց ծավալել նաև **ամերիկա**:

<sup>14</sup> Պողիտիվիստական կրոնագիտության ականավոր ներկայացուցիչ Էմիլ Դյուրկիեյմը (1858-1917) մարդկանց միավորման և հասարակական կապերի ամրապնդման գործում կարևորում է կրոնի և եկեղեցու դերը: Տա չի մերժում կրոնների միջև առկա տարրեղությունները, բայց համարում է նաև, որ նրանց միջև առկա ընդհանրություններն ավելի ազդեցիկ են: Դրանք ծևավորվում են կրոններին ներքնապես բնորոշ «միասնացման զգացմունքի» հիման վրա և պատահական չեն, որ վաղնջական հավատալիքներն անգամ սաղմնային վիճակում բռվանդակում են զարգացած կրոնների բոլոր հիմնական ծիսակարգային տարրերը: Է. Դյուրկիեյմը պնդում է նաև, որ կրոնների տարատեսակները պայմանավորված են հասարակական գործուներով և եզրակացնում են, թե կրոնների բոլոր դասակարգությունները հենված են հասարակական բաժանումների վրա: Այդ հիմնա վրա նա նույնացնում է կրոնն ու հասարակությունը և Աստծոն համարում է հասարակության աստվածացման խորհրդանշ: Իր բոլոր տարատեսակներում, պնդում է Դյուրկիեյմը, կրոնների տեսքով «հասարակությունը պաշտում է ինքն իրեն», քանի որ «Աստված և հասարակությունը նույնական են»: Աստվածայինի գաղափարն արտահայտում է մարդու ուժը, բարձրացնում կոլեկտիվ սկզբունքի դերը: Այլ կերպ ասած, է. Դյուրկիեյմը «կրոնական կոլեկտիվ ապրումները» հանարում է մարդկանց միասնաթյան հիմքը:

**յան դպրոցը:** Վերջինիս պատմական ծառայություններից պետք է համարել կրոնագիտության այնպիսի կարևորագույն ուղղությունների զարգացումը, ինչպիսիք են կրոնի մարդաբանությունը, համենատական կրոնագիտությունը, կրոնի փիլիսոփայությունը, հատկապես՝ կրոնի հոգեբանությունը։ Այդ գործընթացում աչքի ընկնող դեր են կատարել Զ. Հոլլը, Զ. Լեբուան, Է. Ստարբեկը, Ու. Զեյմսը և ուրիշներ։

Այդ ամենն էլ շուրջ 200-ամյա որոնումների արդյունքում հանգեցրեց կրոնագիտության համակարգի ծևավորմանը։ Իրեւ ինքնուրույն գիտական դիսցիպլին՝ կրոնագիտության արդի համակարգը բնութագրվում է հարաբերականորեն ինքնուրույն երկու խոշոր բաժիններով՝ **տեսական և պատմական**։

**Տեսական կրոնագիտության** համակարգն իրենով նշանավորում է կրոնագիտության տեսական հիմնահարցերի փիլիսոփայական ուսումնասիրության ավարտը և կոչված է մշակելու ուսումնասիրության օբյեկտի (կոնկրետ կրոնի կամ կրոնների) ընդհանուր հայեցակարգ, կատեգորիաների և հասկացությունների համակարգ, մեթոդաբանական հիմքեր և համալիր այլ հարցեր։ Իր հերթին տեսական կրոնագիտությունը բաժանվում է հարաբերականորեն ինքնուրույն բաժինների՝ կրոնի փիլիսոփայության, կրոնի սոցիոլոգիայի, կրոնի հոգեբանության և կրոնի ֆենոմենոլոգիայի։ Դա արդեն իսկ վկայում է այն մասին, որ կրոնագիտության արդի համակարգը, փիլիսոփայականից զատ, պահանջում է նաև ուսումնասիրվող հիմնահարցերի սոցիոլոգիական, հոգեբանական, պատմական, սեմիոտիկական, լինգվիստիկական, կառուցվածքագործառնական և այլ վերլուծություն, ինչն էլ համապատասխան տեսությունների և մեթոդների կիրառման միջոցով սահմանում և համակողմանի կերպով բնութագրում է ուսումնասիրության օբյեկտը։

**Պատմական կրոնագիտությունը** համակարգային մոտեցում է ցուցաբերում առանցքային այնպիսի հիմնահարցերի նկատմամբ, ինչպիսիք են կրոնների հաջորդականության (ոհիախրոն) և համաժամանակյա (սիմիխրոն) **ուսումնասիրությունը**։ Պատմական կրոնագիտության ոլորտը բավականին բարդ գիտադաշտ է, որը սերտորեն աղերսվում է կրոնի եռթյան, տարածական ու ժամանակային բնութագրիչների հետ։ Այն, առաջին հերթին, սերտորեն կապված է այն օրինաչափությունների բացահայտման հետ, որոնք լուսաբանում են կրոնների գոյության պատճառները, դրանց ներքին կառուցվածքը, գործառնական առանձնահատկությունները, այլ համակարգերի հետ փոխհարաբերության և հարակից այլ հարցեր։ Այդ համատեսաստում պետք է կարևորել և այն, որ նշված ոլորտներին վերաբերող տեսական ընդհանրացումները ևս բազմաշերտ են ու բազմապլան։ Պատճառն այն է, որ ցանկացած կրոն հանդես է գալիս որպես համակարգային ամբողջություն, որի վերաբերյալ ընդհանրացումներն արձանագրում են վերջինիս հավատքային ու հասարակական բնութագրությունները։ Նույնը պետք է ասել նաև արտաքին իրականության հետ կրոնի ունեցած համընդհանուր, հատկական ու մասնավոր հարաբերությունների վերաբերյալ։ «Կրոն» երևույթի ուսումնասիրության գործընթացում կարևորվում է նաև կրոնի և հասարակական համակարգերի (միջավայրի) փոխհարաբերությունը։ Եվ, վերջապես, պատմական կրոնագիտությունն անհրաժեշտաբար ենթադրում է նաև հասարակական-պատմական կոնկրետ պայմաններում (միջավայրում) գործող կրոնների

ուսումնասիրություն, քանի որ միայն կոնկրետության մեջ է իրական դառնում կրոնական համակարգի հիմնարար տարրերի համակողմանի բնութագրությունը, կրոն - մարդ, կրոն - ազգ և բազմապիսի այլ հարաբերությունների վերլուծությունը:

Պատմական կրոնագիտության հիմնահարցերի նկատմամբ այդ մոտեցումներից օրինաչափորեն բխում են փոխկապակցված երկու հետևողություններ ևս: Կրոնների պատմությունը պետք է ներկայացնել առնվազն երեք՝ համընդհանուր, տարածաշրջանային և կոնկրետ մակարդակով: Եվ երկրորդ, հիմք ունենալով երևույթներն իրենց ամբողջության մեջ դիտարկելու պատմականության սկզբունքը, կրոնների պատմության վերը նշված մակարդակները պետք է մեկտեղել, ներկայացնել մեկ ամբողջության մեջ, նկատի ունենալով և այն, որ վերլուծության համար կրոնների պատմությունը հանդես է գալիս իրեն հարաբերականորեն «բաց» համակարգ:

Այդ ամենը վկայում է, որ պատմական կրոնագիտության համակարգում «կրոն» երևույթի, հավասարապես և հավատքային ցանկացած համակարգի ուսումնասիրությունն անհրաժեշտորեն պահանջում է ճշգրտել կրոնի (հավատքային կրոններտ միավորի՝ կրոնական կամ պաշտամունքային համակարգի, դենոմինացիայի, ներփակ համայնքի, խարիզմատիկ խմբի և այլն) էռությունը, գոյության պայմանները, ծևավորման և գործառնության տարածաժամանակային սահմանները, համակարգային տեսքով ներկայացնել դրանց փոփոխության ու բարեշրջնան մեխանիզմները, հասարակական և պատմական երևույթների համախմբում բացահայտել ուսումնասիրվող հավատքային օբյեկտի կապերը, փոխազդեցության մեխանիզմները և գործառնական նշանակությունը, վեր հանել կրոնների տարածաժամանակային սահմանափակության (այլ համակարգով փոխարինվելու կամ գոյությունը դադարեցնելու) հոգեոր և հասարակական պատճառներն ու պայմանները, բացահայտել և արժևորել կրոնի (կրոնների) դերը հասարակական, պատմական և մշակութային զարգացման համատեքստում:

Այդ մոտեցումը տրամաբանորեն հանգեցնում է և այն հետևողությանը, որ պատմական կրոնագիտության համակարգում տեսական-վիլխովիայական ընդհանրացումների հենքի վրա ծևավորված մեթոդաբանական բոլոր հիմնարար սկզբունքները պետք է սերտորեն շաղկապել նաև պատմականության սկզբունքի հետ, այսինքն՝ կրոնների պատմության հիմնահարցերը դիտարկել հասարակության պատմության համատեքստում:

Յարկ է ավելացնել նաև, որ կրոնագիտական ուսումնասիրությունները սերտորեն շաղկապված են տեսական և մեթոդաբանական սկզբունքների հետ: Եվ եթե տեսականորեն կրոնների ծևավորման, զարգացման և գործառնության յուրատիպությունը բնութագրվում է վերացարկված ծևով, ապա մեթոդաբանական տեսանկյունից այդ ամենի ճանաչողության հիման վրա առաջադրվում են այն մեխանիզմները, որոնք կիրառվում են ճանաչողության ընթացքում: Կրոնագիտության մեթոդաբանությունը գործնականում հանդես է գալիս նաև ընդհանրացման տարրեր աստիճանի սկզբունքների տեսքով: Եվ քանի որ պատմական կրոնագիտությունը միանգամայն բարդ և բազմաշերտ համակարգային երևույթ է, այն բնականոն ծևով ենթադրում է մեթոդների, սկզբունքների և օրինաչափությունների կիրառման բազմաստիճանություն: Դա պատճառաբանվում է

նրանով, որ կրոնագիտական հիմնահարցերի ուսումնասիրության ընթացքում մշակվել և կիրառվում են հետազոտական այլպիսի նոտեցումներ, որոնք օրգանապես միավորում են տեսական, պատմաճանաչողական, ընդհանուր և մասնավոր այլ սկզբունքներ: Եվ որ ամենակարևորն է, հետազոտության արդյունքների շարադրման տեսանկյունից դրանք բոլորն էլ, վերջին հաշվով, հետապնդում են մեկ հիմնական նպատակ՝ փաստարկված կերպով ցույց տալ, որ ցանկացած կրոնական համակարգ օրգանապես (ներքնապես) միաձույլ կառույց է, և որ ցանկացած այլպիսի կառույցի տարրերը կապերը կարելի է բացահայտել միայն կոնկրետ հետազոտության արդյունքում: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ պետք է համարել և այն, որ կրոնագիտության համակարգում առանձնահատուկ տեղ է հատկացվում պատճառական կապերի վերլուծությանը: Այն թույլ է տալիս կրոնական համակարգի տարրերն ուսումնասիրել փոխադարձ կապի և հարաբերությունների տեսանկյունից: Վերլուծական այդ մեթոդը թույլ է տալիս օբյեկտիվության դիրքերից քննարկել կրոնական համակարգերի ներքին և արտաքին պատճառահետևանքային կապերը, բացահայտել և մեկնաբանել կրոնական գործունեության զանազան ձևերը:

Կրոնագիտության համակարգերի վերլուծությունն անհնարին է առանց պատմականության սկզբունքի կիրառման: Այն թույլ է տալիս բացահայտել և ուսումնասիրել կրոնների պատմական ընթացքը, պատմական հաջորդականության դիրքերից ինաստավորված կերպով ներկայացնել անցյալի փաստերն ու իրադարձությունները, որի հենքի վրա միայն հնարավոր կրաօնա ընթացքներ և համակողմանի կերպով մեկնաբանել կրոնական համակարգերի արդի վիճակը: Ընդ որում, կրոնագիտության համակարգում պատմականության մեթոդը կարող է կիրառվել տարրեր՝ ծագումնաբանական, արդիականացնող, պատմահամեմատական և այլ ձևերով:

Կրոնագիտության շրջանակներում չափազանց կարևորվում է նաև **տիպարանացման մեթոդը**: Այն թույլ է տալիս կրոնի (կրոնների) որոշակի հատկանիշների վերլուծության հիման վրա «տարանջատել» առանցքային որևէ որակ (ինչպիսին է, օրինակ, ազգային կրոնների, քաղմաստվածության, քաղկեդոնական կամ հակաքաղկեդոնական եկեղեցիների և այլն) տիպարանացումը: Կարևոր նշանակություն ունի նաև տիպարանացման մեթոդի դրսերման մեկ այլ ձև, որը թույլ է տալիս ուսումնասիրության նպատակով խմբավորել անգամ տարրեր կրոնների միևնույն հատկանիշներով օժտված երևույթները:

Կրոնական երևույթների վերլուծական ուսումնասիրության շրջանակներում մեր օրերում լայնորեն կիրառվում է նաև **ֆենոմենոլոգիական մեթոդը**: Այն նպատակ է հետապնդում **հոգնոր փոխադարձությունները** դիտարկել պատմականությունից դուրս՝ գուտ հավատքային երևույթների որակով, դրանք ենթարկել ինաստային վերլուծության, վեր հանել դրանց առնչությունները կրոնի համար էական և բնութագրական համարվող «սրբազնություն» կատեգորիայի հետ: Մեթոդի կիրառմը թույլ է տալիս ներքին «ուղղվածության» հիման վրա անհատական և հասարակական մակարդակով համադրել և հարաբերակցել հավատքային հիմնարար նշանակություն ունեցող երևույթները, պատկերացումները, գաղափարները և այլն:

Պատմական կրոնագիտության շրջանակներում կարևորվում է նաև էկզեգե-

տիկայի օրգանական «ժառանգորդը» համարվող **հերմենևտիկական մեթոդը**: Սերտորեն կապված լինելով ֆենոմենոլոգիական մեթոդի հետ՝ այն հանդես է գալիս իբրև կրոնական երևույթների ուսումնասիրության յուրահատուկ միջոց: Հերմենևտիկական մեթոդի օգնությանք մշակվում և հոգևոր պրակտիկա են ներդրվում սակրալ տեքստերի, կրոնական հեղինակությունների, ֆենոմենների և այլնի հեղինակային մեկնության հնարներն ու միջոցները: Դաշվի առնելով մեկնության և ըմբռնողության միջև եղած տարրերություններն՝ այդ մեթոդի կիրառումը թույլ է տալիս բացահայտել նաև կրոնական կանոնական տեքստերի կապը համապատասխան հասարակական-մշակութային միջավայրի հետ:

Կրոնագիտական համակարգային վերլուծության շրջանակներում կարևորվում է հատկապես **կառուցվածքագործառնական մեթոդը**: Այն թույլ է տալիս բացահայտել կրոնական համակարգի կառուցվածքը, այդ թվում՝ կառուցվածքային տարրերի գործառնական առանձնահատկությունները: Մեթոդը լայնորեն կիրառվում է նաև միմյանց հետ հարաբերվող կրոնական համակարգերի նույնական տարրերի համեմատական վերլուծության գործում: Վերլուծական այդ սկզբունքը արդյունավետ ձևով կիրառվում է նաև կրոնի ենթահամակարգային տարրերի ուսումնասիրության գործում: Այս մեթոդի կիրառումը կապված է նաև որոշակի դժվարությունների հետ, քանի որ միշտ էլ առկա է «կրոնական փորձի» միակողմանի (սուբյեկտիվ) մեկնաբանման վտանգ: Աշխարհիկ կրոնագիտությունն օգտագործելով դիսցիպլինի գիտական տվյալները՝ կառուցվածքագործառնական մեթոդը կիրառում է կրոնական տարրեր երևույթների էությունը մեկնաբանելու համար:

**Ընդհանրացնելով այդ ամենը՝ կարելի է պնդել, որ կրոնագիտության համակարգի ձևավորումն օրգանապես կապված է գիտական մտքի նվաճումների հետ:** Նրանուն կրոնական համակարգերն անհրաժեշտաբար դիտարկվում են հասարակության, ինչպես նաև՝ հոգևոր մշակութի գարգաման համատեքստում: Դրամից հետևում է, որ կրոնագիտական ուսումնասիրությունների ոլորտում քննարկվում են նաև կրոնի, իբրև մշակույթի յուրահատուկ երևույթի առանձնահատկությունները, կրոնամշակութային երևույթների հատկանիշները, կրոնական փիլիսոփայության, կրոնական բարոյականության, կրոնական արվեստի և այլ երևույթների առանձնահատկությունները:

Նույնը պետք է ասել նաև **աշխարհայացքային հարցերի** վերաբերյալ: Սերտորեն շաղկապված լինելով մարդու էռլույան, գոյության, կյանքի ինաստի և նպատակի, մահվան և անմահության հիմնահարցերի հետ, կրոնագիտությունը ընդհանրացված ձևով հանդես է գալիս և որպես աշխարհի, հասարակության և մարդու վերաբերյալ հայացքների ամբողջություն և որպես ճանաչողության տեսություն, քանի որ համադրում և մեկ ամբողջությամ մեջ է ներկայացնում կրոնական, փիլիսոփայական, իրավաբարոյական, հասարակական-քաղաքական, մշակութային և այլ հայացքները: Միաժամանակ, տարրեր (դիցաբանական, կրոնական, փիլիսոփայական և այլն) աշխարհայացքների տվյալների համադրմանը կրոնագիտությունը «մարդ-բնություն», «մարդ-հասարակություն», «մարդ-պատմություն», «մարդ-մարդ» և բազմաթիվ այլ հարթություններով ձևավորում է գաղափարների ամբողջական պատկեր:

**Կրոնագիտական մոտեցմանը մարդու, հասարակության և աշխարհի նախն**

կրոնական և ոչ կրոնական մոտեցումները ներկայացվում է **ԵՐԿԽՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՍՔՈՎ**, կարևորելով այն, որ կրոնական և ոչ կրոնական աշխարհայացքները ստորաբաժանված են և հանդես են գալիս բազմաշերտությամբ: Այդ աշխարհայացքներում առկա են այնպիսի բաղադրատարրեր, որոնք համընդհանրության, բարոյական պատկերացումների, գեղագիտական արժեքների և այլնի դիրքերից արտացոլում են հասարակության և քաղաքակրթության պատմության զարգացման փուլերին բնորոշ հարաբերությունները, ինչպես նաև՝ կոնկրետ ազգության, հասարակական շերտի, խավի կամ որոշակի խնդիր կեցությունը: Եվ քանի որ կրոնական և ոչ կրոնական աշխարհայացքների ելակետները կարող են և չհմընկնել, նրանք տարբեր կերպ են բացատրում իրական աշխարհը, թեև կարող են ունենալ նաև նույնական մոտեցումներ, գաղափարներ ու արժեքներ:

## ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ ФОРМИРОВАНИЯ ИСТОРИЧЕСКОГО РЕЛИГИОВЕДЕНИЯ

**A. G. КАЛАШЯН**

Формирование системы исторического религиоведения органически связано с закономерностями развития общественной, духовной и культурной жизни общества. А теоретические основы системы исторического религиоведения складывались в XVII-XIX вв., когда философская мысль (Дж. Бико, Ф. Бекон, Д. Юм, И. Гердер, Г. В. Ф. Гегель и др.) эпохи стремилась критически осмыслить эмпирический (исторический, антропологический, этнографический, археологический и т.д.) религиоведческий материал.

В системе исторического религиоведения важное место принадлежит сравнительной методологии, посредством которой стало возможным комплексное теоретическое осмысление мировоззренческих религиоведческих проблем разных (человек-природа, человек-общество, человек-история, и т.п.) уровней.

## THEORETICAL PRINCIPLES FOR ESTABLISHMENT OF HISTORICAL RELIGIOUS STUDIES

**A. G. KALASHYAN**

The formation of the historical religious studies system is tightly connected with the regular developments of spiritual and cultural life of society. The theoretical basis for historical religious studies developed during XVII-XIX centuries when the philosophical mind of the time (J. Bioko, F. Beckon, D. Hume, I. Herder, G. Hegel and others) critically analyzed the empirical (historical, anthropological, ethnographic, archeological, etc.) material of religious studies.

The comparative methodology plays an important role in the system of historical religious studies. It facilitates to analyze the complex theoretical religious issues (human-nature, human-society, human-history, etc.) of different levels.